

5.3. 2004թ. նոյեմբեր ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, նոյեմբերին օդի ամսական միջին ջերմաստիճանը տարածքի մեծ մասում մոտ է եղել նորմային, տեղ-տեղ նորմայից բարձր՝ 1 աստիճանով, Կոտայքի և Արագածոտնի լեռնային առանձին շրջաններում՝ ցածր 1 աստիճանով:

Բարձր ջերմաստիճան է գրանցվել նոյեմբերի 1-3-ին, 9-18-ին, 21-22-ին, երբ օդի օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից՝ 7-13 աստիճանով (նոյեմբերի 1-3-ին, 22-ին), 2-5 աստիճանով (9-18-ին):

Ամսվա առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է նոյեմբերի 1-ին՝ Դիլիջանում (Տավուշի մարզ), Կապանում (Սյունիքի մարզ)՝ $+23^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում և Լոռիում՝ $+20$ $+22^{\circ}\text{C}$, լեռնային շրջաններում և Սյունիքի նախալեռներում՝ $+14$ $+19^{\circ}\text{C}$:

Հյուսիս-արևմուտքից ցուրտ օդային հոսանքների ներխուժմամբ պայմանավորված՝ նոյեմբերի 5-8-ին, 19-20-ին, 23-25-ին և 28-30-ին գրանցվել է ցածր ջերմաստիճան՝ օդի օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 2-4 աստիճանով: Հատկապես ցածր ջերմաստիճան է գրանցվել 28-30-ին, երբ օդի օրական միջին ջերմաստիճանը հյուսիսային և առանձին լեռնային շրջաններում ցածր է եղել նորմայից 5-10 աստիճանով, նվազագույն ջերմաստիճանը Լոռիում գրանցվել է -19°C , լեռնային շրջաններում՝ -11 -16°C (Աշոցքում /Շիրակի մարզ/՝ -23°C), Արարատյան դաշտում (Երևանում՝ -8°C) և Սյունիքում՝ -5 -10°C :

Նոյեմբերի 28-ին նվազագույն ջերմաստիճանը առանձին վայրերում մոտ է եղել և ցածր երբևէ գրանցված բացարձակ նվազագույն ջերմաստիճանից:

Ամսական տեղումների քանակը Լոռիում, Տավուշում, Գեղարքունիքում, Կոտայքում, Արագածոտնում, Վայոց ձորում բարձր է եղել նորմայից և կազմել նորմայի 120-180%-ը, Սյունիքում՝ 150-200%-ը, Արարատյան դաշտում տեղումների քանակը նորմայից պակաս է եղել և կազմել նորմայի 70-95%-ը:

Ամսվա ընթացքում տեղումներ են դիտվել ամսի 3-6-ին, 11-ին, 18-ին, 23-24-ին և 27-28-ին, հատկապես առատ տեղումներ են դիտվել նոյեմբերի 5-ին, 23-ին և 27-ին:

Նոյեմբերի երրորդ տասնօրյակում հանրապետությունում, բացառությամբ Արարատյան դաշտի և Սյունիքի հովիտների, առաջացել է կայուն ձյան ծածկ:

Դեկտեմբերի 1-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը Ապարանում (Արագածոտնի մարզ) կազմել է 34 սմ, Շիրակի մարզում և Ջերմուկում (Վայոց ձորի մարզ)՝ 23-38 սմ, Կոտայքում և Քաջարանում (Սյունիքի մարզ)՝ 10-17 սմ, Լոռիում և Գեղարքունիքում՝ 3-7 սմ:

Նոյեմբերի 4-ին Արարատյան դաշտում, 16-ին՝ Լոռիում, 20-26-ին՝ Գեղարքունիքում, Լոռիում և Արարատյան դաշտում, 28-29-ին՝ Ապարանում և Լոռիում դիտվել է քանու ուժգնացում 15-18 մ/վրկ արագությամբ, պոռթկումները՝ 20 մ/վրկ: Ամսի 23-ին թալիմում (Արագածոտնի մարզ) դիտվել է գետնաբուք՝ 25-28 մ/վրկ արագությամբ, 27-ին Ապարանում 9 ժամվա ընթացքում տեղացել է 20 մմ թաց ձյուն:

Հանրապետության գետերում միջին ամսական ելքերը կազմել են իրենց նորմաների մոտավորապես 70-90%-ը:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում բարձրացել է 2 սմ-ով, այնուհետև՝ նույնքան նվազել և 2004թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 1897.71 մ, որը 2003թ. նույն օրվա համեմատ բարձր է եղել 43 սմ-ով: